ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 5-21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«22» «01» 2021թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Արմեն Խաչատրյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ**-ը, ի դեմս տնօրեն Դավիթ Բաբայանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի **«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն** որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ»** 2021 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել որոշման **1059. Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն** ծրագրի **11003. «Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ»** միջոցառմամբ նախատեսված մինչև **48 065 700** (քառասունութ միլիոն վաթսունհինգ հազար յոթ հարյուր) դրամ գումար (առանց ԱԱՀ-ի)՝ 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով,

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումները, ծախսերի նախահաշիվը, Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ներկայացված են Պայմանագրի համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել Ծրագիրը կատարել Պայմանագրով սահմանված ժամկետներում,

2.1.2. Կազմակերպությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը,

2.1.3. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.4. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագիրը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը,

2.1.5. առանց իրականացված Ծրագրի միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.5.1. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.5.2. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի իրականացման ժամկետները (Ծրագրի իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

2.1.5.3. իրականացված Ծրագրային միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.6. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Ծրագրային միջոցառումների արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք

ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.4.1. Պայմանագրի մաս կազմող N 4 հավելվածով սահմանված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները՝ 2.1.2 կետով սահմանված Հ-8 ձևաչափով ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ 2.1.2 կետով սահմանված Հ-2 և Հ-4 ձևաչափերով ներկայացնել եռամսյակային հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.8. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

3.2. մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

3.3. մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

3.5. մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ,

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի կատարման համար Կազմակերպությանը, որպես դրամաշնորհ վճարել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը,

4.2. Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր, իսկ անհրաժեշտության դեպքում հունվար ամսվա հայտը կարող է ներկայացվել տվյալ տարվա հունվար ամսվա ընթացքում՝ Պայմանագրով սահմանված N 2 ձևաչափով, իսկ Պետական մարմինը՝ այն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն հայտով պահանջվող գումարը վճարում է Կազմակերպությանը: Հայտով պահանջվող ֆինանսավորման չափը չի կարող գերազանցել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով հաշվետու ամսվա համար նախատեսված գումարի չափը: Ընդ որում եռամսյակային հաշվետվությունների չընդունման դեպքում ֆինանսավորումը դադարեցվում է մինչև կատարված աշխատանքների ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար

նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրը կազմված է սույն հիմնական տեքստից, հետևյալ Հավելվածներից և Ձևերից, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը.
Հավելված N 1 -Ծրագրի միջոցառումներ,
Հավելված N 2- Ծրագրի ծախսերի նախահաշիվ,
Հավելված N 3 – Ծրագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց,
Հավելված N 4 - Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց,
Ձև N 1 – Հանձնման-ընդունման արձանագրություն,
Ձև N 2 - ծախսերի կատարման հայտ:
8.2. Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2 կետում նշված

ժամկետներում, Հաշվետվության հետ միասին, երկու օրինակից լրացված, ստորագրված և կնքված ներկայացվում է Կազմակերպության կողմից:

8.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 13 էջից, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900011032183 ՀՎՀՀ 02698604	«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018003849 ՀՎՀՀ 00091693
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

կարգաւ N 5-21 ... 22.01.21.

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Սերմերի որակական ցուցանիշների լաբորատոր հետազոտություններ և պետական սորտափորձարկումների միջոցառումներ	Գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերի նոր սորտերի հայտերի փաստաթղթային վերլուծություններ, սորտափորձարկումների պլանավորում, դաշտային հետազոտությունների կազմակերպում, սերմերի որակական ցուցանիշների լաբորատոր հետազոտությունների իրականացում, բույսերի նոր սորտերի նկարագրությունների կազմում, շրջանացման և օգտագործման թույլտվության նպատակով առաջարկությունների մշակում, բուծողի իրավունքի հավաստման համար արտոնագրերի կազմում և ներկայացում, պետական գրանցամատյանների վարում, օրիգինատորների հաշվառում, նոր սորտերի մշակության նկարագրությունների և սերմնաբուծության զարգացման գիտական աշխատանքների վարում, դրանց հրատարակություն ու տարածում:	1. Իրականացնել մշակաբույսերի նոր սորտերի հայտերի փաստաթղթային վերլուծություն և ապահովել անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական և ճշգրիտ փաթեթը, 2. Կազմակերպել գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի և հիբրիդների տարբերիչ առանձնահատկության, միատարրության և կայունության, տնտեսական օգտակարության պետական փորձարկումներ ՀՀ տարբեր բնակլիմայական պայմաններ ունեցող սորտափորձատեղամասերում, 3. Իրականացնել տեղական արտադրության և ներմուծվող գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի որակի գնահատում, 4. Փաստաթղթավորել դաշտային և լաբորատոր հետազոտությունների արդյունքները և մշակել վերլուծություններ ստացված տվյալների հիման վրա առավել բերքատու, որակական բարձր ցուցանիշներ ունեցող, տնտեսապես արդյունավետ սորտերի ընտրության համար, 5. Տրամադրել սերմերի որակի հավաստագիր տեխնիկական կանոնակարգերին, պետական չափորոշիչներին և այլ նորմատիվ իրավական ակտերի	Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա 1. Ունենալ առավել բերքատու, որակական բարձր ցուցանիշներ ունեցող սորտերի թարմացում, տնտեսապես օգտակար սորտերի գրանցում և շրջանացում, 2. Բարձրորակ սերմերի հավաստագրում և բարեխիղճ սերմարտադրողների, վերամշակողների և իրացնողների համար արդյունավետ պայմանների ապահովում, 3. Բույսերի սորտերի տվյալների բազայի և պետական գրանցամատյանների վարում:	31.12.2021թ.	48065.7

			խսբաքանակների համար, 6. Վարել «Սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանը» և Բույսերի սորտերի պաշտոնական տեղեկագիրը, ինչպես նաև հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանը, 7. Իրականացնել բույսերի սորտերի նոր ցանկի հրատարակություն և դրանց տարածում շահառուների շրջանում:			48065.7
	Ընդամենը					

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
ՀՎ 900011032183
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

L.S.

Կազմակերպություն

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎ 900018003849
ՀՎՀՀ 00091693

Տնօրեն՝

ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

L.S.

Հավելված N 2
2021թ. դեկտեմբերի 22-ի կնքված
N 5-27 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի) Անվանումները	Գումարը /հազ. դրամ/
Ա	Բ	Գ
1	**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ**	**41400,0**
	այդ թվում	
1.1	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	41400,0
2	**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ**	**6461,7**
	այդ թվում	
2.1	***Շարունակական ծախսեր***	***2204,8***
2.1.1	- Էներգետիկ ծառայություններ	1272,8
2.1.2	- Կոմունալ ծառայություններ	7,2
2.1.3	- Կապի ծառայություններ	784,8
2.1.4	- Ապահովագրական ծախսեր	140,0
2.2	***Ծառայողական գործուղումների գծով ծախսեր***	***250,0***
2.2.1	- Ներքին գործուղումներ	250,0
2.3	***Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում***	***775,0***
2.3.1	- Համակարգչային ծառայություններ	105,0
2.3.2	- Տեղեկատվական ծառայություններ	270,0
2.3.3	- Ներկայացուցչական ծախսեր	180,0
2.3.4	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	220,0
2.4	***Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում***	***179,1***
2.4.1	- Մասնագիտական ծառայություններ	179,1
2.5	***Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)***	***946,2***
2.5.1	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	396,2
2.5.2	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	550,0
2.6	***Նյութեր (ապրանքներ)***	***2106,6***
2.6.1	- Գրասենյակային նյութեր և հագուստ	200,0
2.6.2	- Գյուղատնտեսական ապրանքներ	130,0
2.6.3	- Տրանսպորտային նյութեր	1200,0
2.6.4	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	100,0
2.6.5	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	476,6
2.7	**ԱՅԼ ԾԱԽՍԵՐ**	**204,0**
	այդ թվում	
2.7.1	***Հարկեր, պարտադիր վճարներ և տուրքեր, որոնք կառավարման կարգեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ***	***124,0***
2.7.1.1	- Այլ հարկեր	53,0
2.7.1.2	- Պարտադիր վճարներ	71,0
2.7.2	Այլ ծախսեր	***80,0***
2.7.2.1	- Այլ ծախսեր	80,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**48065,7**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011032183
ՀԿՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմակերպություն

Սերմերի գործակալություն ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 900018003849
ՀԿՀՀ 00091693

2021թ. մարտի 22-ի կարգի
N 5-21 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Հիմնարկի անվանումը՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
04	02	01	01	104004

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը 900011032183

Ծրագրի անվանումը Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ

(հազար դրամ)

Ծեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին (ամբողջական)												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	4637	550,0	5 121,8	8 651,8	6 889,4	12 657,3	20 668,2	23 231,7	25 795,2	28 358,7	34 928,7	41 498,7	48 065,7	48 065,7
Ընդամենը		550,0	5 121,8	8 651,8	6 889,4	12 657,3	20 668,2	23 231,7	25 795,2	28 358,7	34 928,7	41 498,7	48 065,7	48 065,7

Հանձնող գանձապետական

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
ՀՀ 900011032183
ՀԿՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

Սերմերի գործակալություն ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900018003849
ՀԿՀՀ 00091693

Տնօրեն ԳՈՐՇԱԿԱԼՈՒՅՑ
ՀԱՅԿ ԳՈՐՇԱԿԱԼՈՒՅՑ

Հավելված N 4
2021թ. մայիսի 22-ի կարգի
N 5-27 համարանշան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ (ԱՐՈՒԶԱՆԻ ՇՐՋԱՆ) ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱՐԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«Վերանորի զարգացման հիմնադրամ» ՊՈԱԿ

Նախագիծ՝ զարգացնող, գերտրանզիտային, սիստեմային կառուցվածքային դաշտերի ներդրումներ ներգրավող տարածքների զարգացման ծրագրի շրջանակներում

Հիմնադրի անվանումը՝

Ծրագրի անվանումը

Վերանորի գրասի արտադրամաս և ավտոմատ արտադրամասերի ենթակառուցվածքների զարգացում

Ծրագրի գործունեության նկարագրությունը	Ակնկալվող էֆեկտիվությունը	Ակնկալվող էֆեկտիվությունը 2021 թվականի ընթացքում ըստ ամսաթվերի					
		1 եռամսյակ	1 կիսամյակ	1 ինն ամիս	տարի		
		մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր		
1	2	3	4	5	6		
Ծրագրավորողական ընթացքում նոր գործընթացների ներդրում և գործող գործընթացների կատարելագործում	Ընդհանուր տարածքի 20%-ի ներդրում	20	50	80	100		
Ինտելեկտուալ սեփականության ներդրում	Ինտելեկտուալ սեփականության ներդրումների 2-ի ներդրում	2	5	8	12		
Ինտելեկտուալ սեփականության ներդրումներ և փոխանցումներ (տող)					1		
Ինտելեկտուալ սեփականության ներդրումներ, ներառյալ գիտելիքի, հմտության և նախագծային փաստաթղթերի ներդրումներ (տող)					1		
Ինտելեկտուալ սեփականության ներդրումներ ստացող ընկերությունների ներդրումներ (տող)							

Դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ամսաթիվ՝ 22.12.2021

Ստորագրություն՝

Ստորագրություն՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
«Վերանորի զարգացման հիմնադրամ» ՊՈԱԿ
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հեռախոս՝ (+374 10) 526560
էլ. փոստ՝ info@armenia.am
հանրային գրանցամատյանում գրանցման համար՝ 900011032183
ՀՎՀՀ՝ 02698604

Ստորագրության վավերացման համար

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱՐԱՆ
Գլխավոր տնօրեն՝ Ս.Ն.Գրիգորյան
ք. Երևան, Լեռնակալ 39 ա
էլ. փոստ՝ info@yerevan.edu.am
հանրային գրանցամատյանում գրանցման համար՝ 900018003849
ՀՎՀՀ՝ 00091693

Հ.Ս.

Հաստատում եմ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____
Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

(Պետական մարմնի անվանումը)-ի և (Կազմակերպության անվանումը)-ի միջև «____» _____ _ -ին կնքված N_____ պայմանագրի շրջանակներում կազմակերպության կողմից 20___ թվականի _____«____»-ից «____» - ն ընկած ժամանակահատվածում կատարվել (մատուցվել) են պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (ծառայությունները).

Կատարված աշխատանքների (մատուցված ծառայությունների)									
/Հ	Անվանումը	Չափի միավորը	Կատարման ժամանակա-հատվածը	Քանակական ցուցանիշները			Արժեքը (հազ. դրամ)		
				Նախատեսված		Փաստացի	Նախատեսված		Փաստացի
				Տարեսկզբին հաստատված	Ճշտված		Տարեսկզբին հաստատված	Ճշտված	
			(Ըստ եռամսյակների՝ աճողական)						
			(Ըստ փաստացի կատարման ժամանակա-հատվածի)						

Կատարված աշխատանքները համապատասխանում են կնքված պայմանագրին ու ծրագրին և ընդունվում են:

Աշխատանքը հանձնեց՝

_____

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Աշխատանքն ընդունեց՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Ֆինանսական ստորաբաժանման ղեկավար

_____

(ստորագրություն ազգանուն, անուն)